ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ ԿԳՄՍՆ «Էջմիածնի արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի «Ոսկերչություն», «Խոհարարական գործ», «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում», «Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում», «Մետաղների մեխանիկական մշակում հաստոցների և գծերի վրա» մասնագիտությունների արտադրական ուսուցման վարպետների և «Հայոց լեզվի և խոսքի մշակույթ»(324 ժամ), «Հաղորդակցություն» (144 ժամ),«Օտար լեզու» (288 ժամ), «Իրավունքի հիմունքներ» (144 ժամ),«Քաղաքագիտություն և սոց.հիմունքներ» (90 ժամ),Ֆիզկուլտուրա(244 ժամ),«Ինֆորմատիկա» (457 ժամ) դասավանդողի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է հանրակրթական առարկաների համար՝ երկու փուլով ՝ թեստավորման և հարցազրույցի, մասնագիտական մոդուլների և արտադրական ուսուցման վարպետների մրցույթի համար՝ հաստատության կողմից նախապես կազմված բանավոր առաջադրանքների միջոցով: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում է առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել ՝

- դիմում (Ձև 1) , մեկ լուսանկար 3 x 4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան, իսկ մասնագիտական առարկաների դեպքում՝ տվյալ մասնագիտության պետական կրթական չափորոշչով սահմանված պահանջներին համապատասխան,աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,
- ինքնակենսագրություն
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր՝ առկայության դեպքում,
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում ՝ հավաստող փաստաթուղթ:

Փաստաթղթերն ընդունվում են 2025 թ.-ի օգոստոսի 25-ից մինչև 2025 թ.-ի սեպտեմբերի 11-ը ներառյալ , ամեն օր ժամը 9^{00}-ից 15^{00}, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա հանրակրթական առարկաների համար 2025 թ.սեպտեմբերի 18-ին ՝ ժամը 13^{00}-ին, մասնագիտական մոդուլների և արտադրական ուսուցման վարպետների մրցույթի համար 2025 թ. սեպտեմբերի 16-ին ՝ ժամը 13^{00}-ին «Էջմիածնի արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ում, հասցեն ՝ ք. Էջմիածին, Մ.Մելքոնյան 53, հեռ.(0231)5-59-65, 093-19-85-14: